



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև ՀՀ փաստաբանների պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Հարություն Հարությունյանի և Կարեն Սարգսյանի,

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխությունները,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի ուժով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել (լրացնել) Փաստաբանների պալատի կանոնադրությունը և Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև ձևավորելու կարգապահական հանձնաժողով,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ և 5-րդ մասերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.4-րդ կետի 2-րդ ենթակետի, 7.7-րդ, 7.8-րդ, 14.1-ին և 14.2-րդ կետերի պահանջներով,
միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09⁰⁰-ից ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Ջաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- 1) ՀՀ փաստաբանական պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության մասին.**
- 2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 3) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**



2. Սահմանել, որ՝

- 2.1. օրակարգային հարցերով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 09⁰⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18⁰⁰-ին.
- 2.2. Կարգապահական հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2022 թվականի նոյեմբերի 26-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին (ներառյալ).
- 2.3. Կարգապահական հանձնաժողովի անդամների թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2022 թվականի դեկտեմբերի 2-ից (ներառյալ) և ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 18⁰⁰-ին:
- 2.4. Կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրությունն անցկացնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրության ձևաչափով համաձայն Կանոնադրության՝ հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումների նախագծերը ընդհանուր ժողովի գումարման օրվանից ոչ ուշ քան 14 օր առաջ:

5. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին՝ էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 7-2) հայտարարությունների ցուցատախտակին ծանուցումը հրապարակելու միջոցով.
- օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բարայան

22 նոյեմբերի 2022թ.
թիվ 19/4-L
ք. Երևան

